ես զկտորակ մի թղթոյ գրեալ ձեռամբ Գերյարգութեանդ յորում իցէ գրեալ. թէ ահա ըստ խնդրոյ ձերոյ եատ օրինակել ի բուն գրքէ չարադրողին ի մեր վանքն զվարս երանելւոյն. և առաքեցի ձեզ։ Եւ այս ամենայն է առ ի հաստատութիւն և ի վկայութիւն վարուցն երանելւոյն ընդդէմ թերահաւատից։...

1771 *Ապրիլի* 26 — *Նուաստ ծառայ*

[*Կ. Պոլիս*] — *Հ. Զաքարիա վ. Ա. Մ.*

ՄՂԸ.

Զամչեան Հ. Միք. իր զոյգ ընկերներուն համառօտիւ կը հաղորդէ առած ծանօթութիւնները Դամասկոսի, Հալէպի և այլ քաղաքներու մէջ տեղի ունեցած քաղաքական արշաւանքներու, ինչպէս նաև Տիարպէքիրի մահտարաժամին, Տիգրիսի յորդումին և Պասրայի արտասովոր տօթին մասին։

Մեծարգոյ հարգի և համաանունելի սիրելի եղբարցդ՝ Վերապատուելի տեառն տեառն Հայր Մանուէլ վարդապետի, և վերապատուելի տեառն տեառն Հայր Սուքիաս վարդապետի ողջոյն և խաղաղութիւն ի Քրիստոս

1771 *յօգոստոսի* 10

... Ալիպէյն մսրայ հասեալ ի վերայ դամասկոսի՝ և ընդ քսան և հինգ բդեաշխս պատերազմ տուեալ առեալ է զքաղաքն ստուգիւ. և այժմ ասեն, թէ դառնայ ի վերայ Հալպու. և որպէս ոմանք ասեն. մերձ է հասանիլ և պաշարել զայն։ Եւ զայլ բազում քաղաքս առեալ է ասեն՝ ձեռնտուութեամբ չէխին ագրիոյ, յոր ելաք մեք զառաջինն ի նաւուն։ Ասեն ոմանք, թէ նաև հերակլն առեալ է զաղձխայ։ Իսկ ի վերայ պատերազմին՝ որ ի մէջ հիւսիսայնոյն և հարաւայնոյն ամենևին ձայն ինչ ոչ գոյ. ոչ յաղթութեան և ոչ պարտութեան, և ոչ իսկ հաշտութեան։

Անտանելի մահտարաժամ տիրեալ է ի տիարպեքիր. ուստի և բազումք յերկիւղէ մահու փախուցեալ են անտի գալ ի պաղտատ. և ի ճանապարհի մեռեալ են իբրև 160 *ոգիք։ Իսկ փաշայն պաղտատայ զայն լուեալ՝ արգելեալ է զնոսա երկու աւուրբք հեռի ճանապարհաւ զի մի եկեսցեն ի պաղտատ։ Բայց այսու ամենայնիւ հիւանդութիւն մեծ և բազում անկեալ է ի պաղտատ. և ոչ գիտեմ՝ ժանտամահ է՝ թէ այլ ինչ. այսչափ միայն լսեմք՝ թէ յաճախեալ է անդ հիւանդութիւնն։*

Տիգրիգ գէտն զեղաւ՝ և լցոյց զանապատն պասրայու. և թէպէտ ի սկզբան կալան զայն. այլ ի յորդիլ ջուրցն յուսահատեալ՝ թողացուցին՝ մինչև ինքն դադարեցաւ։ Եւ յայնմանէ բազում հիւանդութիւնք անկան ի պասրայ և բազումք ես մեռան. և այժմ ի մէջ ասորւոց յաճախեալ է յոյժ հիւանդութիւնն։ Տուն ոչ գոյ, ուր չիցէ հիւանդութիւն. ի միումն երկու, ի միումն չորս. ըստ այսմ և յայլս. նոյնպէս և ի մէջ Հայոց։...

Ցայսմ ամի այնչափ սաստկացաւ տօթ ջերմութեան քաղաքիս՝ մինչև բազմաց նուաղիլ և չնչասպառ մնալ՝ մանաւանդ ի շնչել հարաւային հողմոյն, զոր շալկի կոչեն։ Ընդ տօթոյն և խժային գիջութիւն անտանելի և տամկութիւն ձիւթային և թուլութիւն անզօրանալի. որով այնչափ նուաղեալ եմ, մինչ գրեթէ ոչ գիտեմ ուր եմ, և զինչ գրեմ, և զիարդ գրեմ... ի գրելս իմ զայս թուղթս եթէ զամենայն քրտունս իմ ի մի ժողովէի՝ կարծեմ թէ աւազան մի ջրոյ լինուի։... ոմանք ասեն, թէ մեք յերկոտասան ամաց հետէ այսպիսի տօթ չէր պատահեալ ի պասրայ։...

[*Պասրա*] — *Նուաստ ծառայ*

Հ. Միքայէլ Զ[ամչեան]. Վ. Ա.